ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՈՒՍԱՆԱԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՇԵՆՔԻ ՄԱՍՆԱՇԵՆՔԵՐՆ ԻՐԱՐ ՄԻԱՑՆՈՂ ՄԻՋԱՆՑՔԻ ՏԱՆԻՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻԿԱՏԱՐՄԱՆ

ԳՆՄԱՆՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2020/7

Ք. Երևան «21» 12 2020թ.

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը, ի դեմս գործադիր տնօրեն **Ա.Սողոմոնյանի**, ով գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Շինարար-97 ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ.Ահարոնյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառունպարտավորվումէսույնպայմանագրովսահմանվածկարգով, նախատեսվածծավալներով, ձևովևժամկետներումկատարելսույնպայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածովսահմանվածծավալաթերթ-նախահաշվովնախատեսված **«ՀՀ Շիրակի մարզի «Գուսանագյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի շենքի մասնաշենքերն իրար միացնող միջանցքի տանիքի վերանորոգման»** աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են տեխնիկական հսկողության պայմանագիրը կնքելուց հետո: Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը սահմանվում է՝ 84 օր, որը կհստակեցվի կողմերի միջև կնքվող լրացուցիչ համաձայնագրով:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջ ներներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունքունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրակայան, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 6Հավելվածում:

3.4.10Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 30 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները:Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **2,577,130 (երկու միլիոն հինգ հարյուր յոթանասունյոթ հազար հարյուր երեսուն)**ՀՀ դրամ, որից **429,522(չորս հարյուր քսանինը հազար հինգ հարյուր քսաներկու)** ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև **644,280 (վեց հարյուր քառասունչորս հազար երկու հարյուր ութսուն)** ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով:Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կապալառուին վճարումներ չեն կատարվում:[30]

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է

---

[30] *Կապալառուն կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հատկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:*

տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմականնարտակարգդրությունհայտարարելը, քաղաքականհուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքովկամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11Սույն պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	Շինարար-97 ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31	Հասցե՝ ՀՀ, ք. Գյումրի Տեքստիլագործների29/3
ՀՎՀՀ՝00846441	ՀՎՀՀ՝05510886
Հ/Հ՝ 900018001231	Հ/հ՝ 163527033183
Կենտրոնական գանձապետարան	Բանկ՝ ՀԱՅԷԿՏ ԲԲԸ Շիրակ մ/6
Գործադիր տնօրեն Արթուր Սողոմոնյան	Հովհաննես Ամարյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող [illegible] ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Սույն պայմանագրի կատարումն իրականացնելու համար անհրաժեշտ է ***<<Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում>>*** *լիցենզիա* ***«Բնակելի, հասարակական և արտադրական»*** *ներդիրով:*

Հավելվածթիվ 1
«»21. 12 2020թ. կնքված
ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2020/7 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

«ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՈՒՍԱՆԱԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՇԵՆՔԻ ՄԱՍՆԱՇԵՆՔԵՐՆ ԻՐԱՐ ՄԻԱՑՆՈՂ ՄԻՋԱՆՑՔԻ ՏԱՆԻՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Հ/հ	Հիմնավորում	Աշխատանքի անվանումը	Չ/միավոր	Քանակ	Միավորի ընդհանուր արժեքը	Ընդհանուր արժեքը
1	2	2	3	4	5	6
		1.Քանդման աշխատանքներ				
1	Կ9-24 q=0,5	Տանիքի ծածկի պահպանված հատվածի ձևավոր ցինկապատ թիթեղե ծածկույթի ապամոնտաժում	մ²	8.40	456.00	3,830
2	Կ10-198 q=0,8	Տանիքի ծածկի պահպանված հատվածի փայտե կառուցատարրերի ապամոնտաժում	մ²	8.0	490.00	3,920
3	8-254 q=0,6	Տանիքի ծածկի ռուբերոիդի և բիտումի գոյություն ունեցող շերտի քանդում	մ3	54.0	550.00	29,700
4	Կ46-35	Պատերից և առաստաղից գաջի սվաղի քայքայված հատվածի հեռացում	մ²	38.0	380.00	14,440
5	14-320	Պատերից և առաստաղից հին ներկի շերտի մաքրում	մ²	128.0	200.00	25,600
6	8-599-1 q=0,5	Բնահողի քանդում ձեռքով /եզրաքարերի հիմքերի համար/	մ³	1.6	2,550.00	4,080
7	Կ46-100	Քայքայված բետոնե սալվածքի քանդում	մ³	1.0	5,200.00	5,200
8	17-141	Թուջե ջեռուցիչ սարքերի ապամոնտաժում /1հատ-12 մարտկոց/	լր	4.0	1,350.00	5,400
9	8-599-2 q=0,5	Էլ. լուսավորության լուսատուների ապամոնտաժում	հատ	2.0	1,275.00	2,550
10	23-77 23-226 գլ.3	Շին աղբի կուտակում, բարձում ձեռքով ինքնաթափ մեքենաները և տեղափոխում, մինչև 3կմ	Տ	21.6	2,480.00	53,568

		Ընդամենը՝ 1.				**148,288**
		2.Վերանորոգման աշխատանքներ				
		2.1 Տանիքի վերանորոգման աշխատանքներ				
1	Կ10-70	Տանիքի փայտե կառուցատարրերի և կավարամածի կառուցում , մշակված հականեխիչ նյութերով	մ³	2.89	212,500.00	614,125
2	իտ	Ամրանալար AI Φ10	մ	11.00	486.00	5,346
3	իտ	Պողպատե անկյունակ 40x40x4մմ չափի /արժեքը/ (0,06*64=3,85մ) L=0,06մ	մ	3.850	1,950.00	7,508
4	իտ	Պողպատե թիթեղի տեղադրում 4մմ հաստ. S=0,016մ2 34 հատ /արժեքը/	մ2	0.540	17,150.00	9,261
5	իտ	Տոլ 0,55մ լայնությամբ L=32,2մ	մ2	17.70	1,150.00	20,355
6	Կ9-24	Տանիքի ձևավոր ցինկապատ թիթեղե ծածկույթի մոնտաժում, ԿՊ-21-0,55մմ	100մ²	0.60	369,940.00	221,964
7	Կ12-278	Տանիքի հորիզոնական ջրհորդանների կառուցում 0,55մմ հաստ. ցինկապատ թիթեղով լայն. 800մմ	մ	27.00	4,350.00	117,450
8	Կ12-280	Տանիքի հարթ ցինկապատ թիթեղով ծածկույթի մոնտաժում, 0,55մմ հաստ. (գագաթնաձևի և պատի վրա /6,4+0,6=7,0քմ/)	100մ²	0.07	336,150.00	23,531
9	Կ12-280	Տանիքի հարթ ցինկապատ թիթեղով արցունքաթափի իրականացում, 0,55մմ հաստ	100մ²	0.23	336,150.00	77,315
10	12-278	Ջրահեռացման ուղղահայաց խողովակաշղթերի մոնտաժում, ցինկ. պող. Φ150մմ խողովակ, 0,55մմ հաստ.	մ	6.80	3,454.00	23,487
11	Կ16-188	Ջրահեռացման ձագարների տեղադրում, ցինկապատ թիթեղից Φ150մմ, 0,55մմ հաստ	հատ	2.0	7,350.00	14,700
12	1-962	Խարամի շերտի մեջ փոսերի փորում փայտե հենձանների տեղադրման համար/0,2x0,25x0,45/ 9հատ	մ3	1.6	3,750.00	5,813
13	իտ	Ջրահեռացման արմունկներ /արժեքը/, ցինկապատ թիթեղից Φ150մմ, 0,55մմ հաստ.	հատ	2.0	2,392.00	4,784
14	10-203	Տանիքի փայտե կառուցատարրերի հրապաշտպանում	մ2	60.0	650.00	39,000
15	Շուկա	Դյուբելներ, ինքնապտուտակներ M16x300, M16x150	հատ	22.0	850.00	18,700
		Ընդամենը՝ 2.1				**1,203,337**
		2.2 Ներքին վերանորոգման աշխատանքներ				
1	11-57	Պատերի գաջե սվաղի վերականգնում	մ²	24.0	2,150.00	51,600
2	11-64	Արասաղի գաջե սվաղի վերականգնում	մ²	13.8	2,550.00	35,190
3	Կ15-664	Պատերի ներկում լատեքսային ներկով, ծեփամածկումով	մ²	82.0	1,915.80	157,096

4	Կ15-665	Առաստաղի ներկում լատեքսային ներկով, ծեփամածկումով	մ²	46.0	1,920.00	88,320
5	Կ18-109 գ=4,2	Նախկինում ապամոնտաժված թուջե ջեռուցիչ սարքերի մոնտաժում /1հատ-12 մարտկոց/	լր	4	2,875.00	11,500
6	8-599-2	Էլ. լուսավորության նախկինում ապամոնտաժված լուսատուների մոնտաժում	հատ	2	2,766.00	5,532
		Ընդամենը՝ 2.2				**349,238**
		Ընդամենը՝ 2.				**1,552,575**
		3. Բարեկարգման աշխատանքներ				
1	Կ11-2	Բնահողի խառացում խճով	100մ²	0.27	28,000.00	7,560
2	Կ11-6	Խճե խառնուրդի տուփանում ասֆալտի ծածկույթի տակ, 10սմ հաստ. /23քմ*0,1=2,3խմ/	մ³	2.30	11,550.00	26,565
3	16-78	Բազալտե 150*300մմ չափի եզրաքարերի տեղադրում Կ15 դասի բետոնե հիմքով	մ	27.0	8,510.00	229,770
4	11-215	Բազալտե սալերի/բրեկչա/ շերտ h=4սմ հաստությամբ.ամրացված գ/ա շաղախով	մ²	23.0	7,950.00	182,850
		Ընդամենը՝ 3.				**446,745**
		Ընդամենը՝ 1;2;3				**2,147,608**
		Ընդամենը				2,147,608
		ԱԱՀ - 20 %				429,522
		Ընդամենը				**2,577,130**

* Կապալառուն աշխատանքները կատարում է **ՀՀ Շիրակի մարզի Գուսաննագյուղ** հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Արթուր Սողոմոնյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Շինարար-97 ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Գյումրի
Տեքստիլագործների29/3
ՀՎՀՀ՝05510886
Հ/հ՝ 163527033183
Բանկ՝ ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ ԲԲԸ Շիրակ մ/6
Տնօրեն
Հովհաննես Սիմոնյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելվածթիվ 2
«21 -12 2020թ. կնքված
ՀՇ-ԳՀ-ԱՇՁԲ-2020/7 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆԳՐԱՖԻԿ

Չափաբաժին 1

N Ը/Կ	Կապալառուիկողմիցկատարվելիք աշխատանքներիհառանձինտեսակ ների անվանումներ	Աշխատանքներիկատարմանժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	**«ՀՀ Շիրակի մարզի «Գուսանագյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի շենքի մասնաշենքերն իրար միացնող միջանցքի տանիքի վերանորոգման» աշխատանքներ**	*Տեխնիկական հսկողության պայմանագիր կնքելուց հետո, կողմերի միջև կնքվող լրացուցիչ համաձայնագրով սահմանված օրը*	84 օր
ԸՆԴԱՄԵՆԸ			84 օր

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Արթուր Սողոմոնյան

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Շինարար-97 ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Գյումրի
Տեքստիլագործների29/3
ՀՎՀՀ՝05510886
Հ/հ՝ 163527033183
Բանկ՝ ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ ԲԲԸ Շիրակ մ/ճ
Տնօրեն
Հովհաննես Սիսոյան

/ստորագրություն/

Հավելված N 3
«21» 12 2020թ. կնքված
ՀԾ-ԳՀ-ԱԵՁԲ-2020/7 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀդրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումներիպլանովնախատեսվածածմիջանցիկծածկագիրը՝ ըստԳՄԱդասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020-2021 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45261124	տանիքների վերանորոգման աշխատանքներ	2,577,130	2,577,130	2,577,130	2,577,130	2,577,130	2,577,130	2,577,130	2,577,130	2,577,130	2,577,130	2,577,130	2,577,130	2,577,130

** Վճարմանենթակագումարներըներկայացվում են աճողականկարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Արթուր Սողոմոնյան

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Շինարար-97 ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Գյումրի
Տեքստիլագործների29/3
ՀՎՀՀ՝05510886
Հ/հ՝ 163527033183
Բանկ՝ ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ ԲԲԸ Շիրակ մ/ճ
Տնօրեն
Հովհաննես Սիսակյան

/ստորագրություն/

Հավելվածթիվ 4
«»21 - 12 2020թ. կնքված
ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2020/7 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրիկողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելուվայրը _____	գտնվելուվայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻԿԱՄԴՐԱՄԻՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « »20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
_____
Պայմանագրիկնքմանամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրիհամարը՝ _____
ՊատվիրատունևՊայմանագրիկողմը՝հիմք ընդունելովպայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
ՊայմանագրիշրջանակներումՊայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարվածաշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
«»21 - 12 20 20թ. կնքված
ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2020/7 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

Պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ_____-ի(այսուհետ՝ Պատվիրատու) և_____-ի
Պատվիրատուինկապալառուինանունը
(այսուհետ՝ Կապալառու)միջև20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
Անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված 5
«21-12» 2020թ. կնքված
ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2020/7 ծածկագրով պայմանագրի

«ՀՀ Շիրակի մարզի «Գուսանագյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի շենքի մասնաշենքերն իրար միացնող միջանցքի տանիքի վերանորոգման»
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻԿԱՏԱՐՄԱՆ

Գծագրերը կից

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Արթուր Սողոմոնյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Շինարար-97 ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Գյումրի
Տեքստիլագործների29/3
ՀՎՀՀ՝05510886
Հ/հ՝ 163527033183
Բանկ՝ ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ ԲԲԸ Շիրակ մ/ճ
Տնօրեն
Հովհաննես Մհարությունյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 6
«21 - 12 2020թ. կնքված
ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2020/7 ծածկագրով պայմանագրի

Անի համայնքի «Գուսանագյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի շենքի մասնաշենքերն իրար միացնող միջանցքի տանիքի վերանորոգման աշխատանքների ընթացքում օգտագործվող նյութերի տեխնիկական բնութագրեր, երաշխիքային ժամկետներ, աշխատանքների կատարման լիցենզիաներ, աշխատանքային ռեսուրսներ

Կապալի օբյեկտի երաշխիքային ժամկետը՝ երկու տարի			
հ/հ	Անվանումը	Տեխ. բնութագիր	Երաշխիքային ժամկետ
1.	երկաթբետոնե տարրեր	Ըստ նախագծի և գործող ստանդարտների	15 տարի
2.	Տանիքի փայտե կոնստրուկցիաներ և կավարամած	Ըստ նախագծի և գործող ստանդարտների	15 տարի
3.	Ցինկապատ թիթեղ	0,55մմ հաստ.	15 տարի
4.	Տանիքի ձնավոր ցինկապատ թիթեղե ծածկույթ	ԿՊ-18-0,55մմ	15 տարի
5.	Ջրահեռացման խողովակներ	ըստ նախագծի	10 տարի
6.	Ջրահեռացման ձագարներ	ըստ նախագծի	10 տարի
7.	Հարդարման աշխատանքներ	Պատերի և առաստաղի գաջ սվաղ, լատեքսային ներկում	5 տարի
8.	Բարեկարգման աշխատանքներ	Ասֆալտբետոնե ծածկույթ	5 տարի
		Բազալտե եզրաքարեր	10 տարի

Աշխատանքների կատարման համար անհրաժեշտ լիցենզիաները՝

• բնակելի, հասարակական և արտադրական:

Աշխատանքների կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներ՝

• բեռնատար ավտոմեքենա - 1 հատ,

• բեռնատար ինքնաթափ - 1 հատ,

Աշխատանքների կատարման համար ներկայացվում են հետևյալ աշխատանքային ռեսուրսները՝

• ճարտարագետ-շինարար - 1 մարդ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ 00846441
ՀՀ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Արթուր Սողոմոնյան

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Շինարար-97 ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Գյումրի
Տեքստիլագործների29/3
ՀՎՀՀ՝05510886
ՀՀ՝ 16003038183
Բանկ՝ ՀԱՅԿԱ ԲԱՆԿԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ Շիրակ մ/ճ

Տնօրեն
Հովհաննես Սիարոյան

/ստորագրություն/